

Ռ. ԿԻՊԼԻՆԳ

ԱԻԿԱԿԻ-ՏԻԿԱԿԻ-ՏԱՎԻ



825
4-50

NOV 2011

824
4-50

Այ.

Ո. ԿԻՊԼԻՆԳ

Ա Կ Կ Կ Ի
Տ Կ Կ Կ Ի
Տ Ա Վ Ի



42488

Թարգմ. Խնկո - Աղեր
Գրքի ճկաբը և բռնը
յել շապիկը Վ. ԿՈՒՐԴՈՎԻ
2-րդ հրատարակություն



ՈՒՍՏԱՆԿՀՐԱՑ
ՅԵՐԵՎԱՆ - 1936

Հրատարակչ. № 3558.
Տ ի ր ա ժ 5000
Պ ա տ վ ե ր № 39

Պատ. Խմբագիր Ս. Հայրյան Տեխ. Խմբագիր. Ե. Ճինհիքալյան
Ելբագրիչ. Մ. Գևորգյան

Հանձնված և արտադրության 25Վ-36 թ. Սորբագրված և ապելու 10Վ-36 թ.
Առաջնական Ա.5

Уполномоченный № 00.11457. Типография краевого армянского изда-
тельства „ГРО“, Ростов-Дон, Ворошиловский пр. № 27.

Ահա մի մեծ պատերազմի պատմություն։ Այդ մեծ
պատերազմը վարում եր իր սեփական ուժերով Ռիկկի-
Տիկկի-Տավին։ գիտե՞ք վորտեղ։ Սեգովլի անունով մի ռազ-
մական փոքրիկ գյուղում, մեծ տան լողանքի սենյակում։
Ճիշտ ե, նրան ոգնեցին Դարզի-Սլավկա գերձակը և Զու-
չունդրա առնետը, վորը յերբեք սիրտ չեր անում համնել
մինչև սենյակի մեջտեղը, այլ միայն պատերի յերկարու-
թյամբ եր վազվզում։ Նա նրան ոգտավետ խորհուրդ եր
տալիս։ Բայց իսկական պատերազմ վարողը Ռիկկի-Տիկկի-
Տավին եր։

Որիկեն մանգուստ * եր, շատ նման փոքրիկ կատվի-
կին՝ թե պոչով և թե մազով, բայց գլուխն ու ձևերը կա-
տարյալ հիշեցնում եյին իսկական աքիսին։ Նրա աչքերը
և անհանգիստ քթի ծայրը վարդագույն եյին և վնար վոտ-
քով եւ լիներ՝ առաջին, թե յետի նա կարող եր իր ուզածի
պես քորել մարմնի բոլոր մասերը։ Նա կարողանում եր իր
պոչն այնպես ուռեցնել, վոր գառնում եր լամպի ապակի
սրբող խոզանակի պես մի բան։ Քաշվելով խիտ խոտերի
մեջ, նա արձակում եր կովի կոչ — ուիկկ-տիկկ, տիկկի-
տիկկի։

* Մանդուսա - մկների մի տեսակը, վոր տարածված է Հնդկաստանում:



Մի գեղեցիկ որ ջուրը հանեց նրան բնից, վորտեղ նա ապրում եր իր հոր և մոր հետ։ Տոնտորալով և խեղդվելով՝ նա տարփում եր ջրի յերեսով, մինչև վոր ընկավ ճամբի մոտի արխը։ Նա այստեղ տեսավ ջրի յերեսին լողացող մի փունջ խոտ, կպավ նրան և կորցրեց գիտակցությունը։ Յերբ նա ուշըի յեկավ, պարզվեց, վոր ինքն ընկած և այգու ճամբի մեջտեղը՝ սոսկալի ցեխուված, իսկ նրա վերել կանգնած մի մանուկ ասում եւ։

— Այ, մեռած մանգուստ, տանենք թաղելու։

— Վոչ, — առարկեց մանկան մայրը, — տանենք նրան և չորացնենք, գուցե նա դեռ կենդանի յեւ։

Նրանք տարան նրան տուն, վորտեղ մի մեծ մարդ սեղմեց նրան ցուցամատով ու բթով և հայտարարեց, վոր նա մեռած չե, այլ կիսամեռ եւ։ Նրանք փաթաթեցին նրան բամբակի մեջ, կրակի վրա տաքացրին. նա բացեց աշբերն ու փոշտաց։

— Եհ, իսկ հիմա, — ասավ Մեծ Մարդը (դա անգլիացի յեր, վոր նոր եր ապրում այդ տանը), — միք վախեցնի նրան, նայենք-տեսնենք, ինչ կանի նա։

Դժվար բան չկա, քան թե մանգուստին վախեցնելը, վորովհետեւ այդ գաղանիկը, պոչից սկսած մինչև քթի ծալը զարմանալի հետաքրքիր եւ։ Բոլոր մանգուստների նշանաբանն այս եւ։ «Վազիր և իմացիր, բանն ի՞նչ ե»։ Իսկ Ռիկկի-Տիկկի-Տավին իսկական մանգուստ եր։ Նա լավ դիտեց բամբակը, վճռեց, վոր դա ուտելու բան չի, շրջագալեց ամբողջ սեղանը, նստեց, և կոկելով իր բուրդը, սանրվեց ու ցատկեց մանկան ուսին։

— Զվախես, Թորիկ, — ավելացրեց հայրը — Այդ նա ուզում ե քեզ հետ բարեկամություն հաստատել։

— Այս, նա խտուտ ե տալիս կղակս, — ասավ Թորիկը։
Ռիկկին յերեխայի ոձիքից ներս նայեց, հոտոտեց նրա
ականջը և հետո սողաց հատակին, այստեղ ել նստեց և
սկսեց եր քիթը արորել։

— Այս ինչ բան ե, — աղաղակեց Թորիկի մայրը, —
այ քեզ վայրի գաղանիկ։ Շատ կարելի յե ձեռնասուն դար-
ձավ դրանից, վոր մենք նրա հետ լավ վարվեցինք։

— Բոլոր մանգուստներն այսպես են, — պատասխա-
նեց նրան ամուսինը։ Յեթե Թորիկը չքաշի նրա պոչից,
կամ թե վանդակի մեջ չդնի, նա ամբողջ որերով կվազի
տնով մեկ։ Նրան ուտելու բան տվեք։

Մի կտոր հում միս տվին։ Ռիկկի-Տիկկի-Տավին շատ եր
սիրում հում միս, և յերբ ուտելը վերջացրեց, դուրս յե-
կավ սրահը, նստեց արևակողը և մազեցը զգգղեց, վոր
դրանք արմատից չորանան։ Դրանից ել նա թեթևացավ։

— Միայն թե, — ասավ նա իրեն, — այստեղ չափա-
զանց շատ հետախուզելու բաներ կան, վորոնց յես չեյի
գտնի մեր բնում ամբողջ կյանքում։ Յես այստեղ կմնամ
և կպարապեմ ուսումնասիրությամբ։

Ամբողջ որը նա թափառում եր տանը՝ այստեղ, այս-
տեղ։ Նա քիչ եր մնում խեղզվեր լողանքի դաշտում, քիթը
խոթեց գրասեղանի թանաքամանի մեջ և քթի ծայրն այ-
րեց Մեծ Մարդու միգարից այն ժամանակ, յերբ բարձ-
րացավ այդ մարդու ծնկներին, վոր տեսնի, թե ինչպես
են գրում մարդիկ։ Յերեկոյան նա վազեց Թորիկի սեն-
յակը նայելու, թե ինչպես են վառում նավթի լամպան։ Իսկ
յերբ Թորիկը պառկեց քնելու՝ նա սողաց դեպի անկողինը,
նրա մոտ։ Բայց այդ գաղանիկը շատ անհանգիստ ընկեր
եր։ Ամբողջ գիշերը, ամեն ըովե ամեն ձայնի վրա վեր եր

թռչում և վազում եր իմանալու, թե ինչ բան ե։ Պառկե-
լուց առաջ՝ Թորիկի հայրն ու մայրը սովորաբար գալիս
եյին վերջին անգամ նայելու մանկանը։ Նրանք տեսան,
վոր Ռիկկին նստած ե բարձին։

— Այդ ինձ դուք չի գալիս, — դժգոհելով ասավ Թոր-
իկի մայրը, — կարող ե կծել յերեխին։

— Այդպես բան չի անի նա, — առարկեց հայրը, — Թո-
րիկը այդ գաղանիկի հետ ավելի ապահով ե, քան թե խռո-
ղարկու շան հետ։ Թեկուղ հիմա ոձ մտներ մանկանց։

Բայց Թորիկի մայրը լսել անգամ չեր ուզում այդպիսի
սարսափիների մասին։

Վաղ առավոտյան Ռիկկին, Թորիկի ուսին հեծած, յե-
կավ առաջին նախաճաշին։ Նրան տվին բանան և ձու։ Նա
հերթով նստում եր բոլոր նախաճաշողների ծնկներին։ Ամեն
մի կարգին մանգուստն այն հույսն ունի, վոր վաղ թե ու շ
լինելու յե տանու մանգուստ, և սենյակներում վազվելու
իրավունք ե ստանալու։ Այդպես ե յեղել Ռիկկի-Տիկկիի
մայրը։ Նա յերկար ժամանակ ապրում եր Սեգովլի գլու-
ղում մի զորապետի տան։ Մայրը մանրամասն բացատրել
ե նրան, թե ինչպես պիտի պահի իրեն սպիտակ մարդ-
կանց հետ։

Հետո Ռիկկի-Տիկկին գնաց այգին դիտելու։ Այգին շատ
մեծ եր, կիսով չափ մշակված, վորտեղ կային մեծ քանա-
կությամբ վարդի թփեր, կիտրոնի և նարնջի ծառեր, խիտ
բուսած բամբուկ և բարձրաբոյ խոտ։ Ռիկկի-Տիկկիի բե-
րանի ջուրը գնաց։

— Վորսի համար հրաշալի տեղ ե, — ասավ նա, և հենց
այդ միտքը ուղցրեց նրա պոչը իսկ և իսկ խոզանակի պես։
Նա վազվում եր այգու մեջ բոլոր ուղղություններով,

— Այս նա խտուտ ե տալիս կղակս, — ասավ Թորիկը:

Ռիկին յերեխայի ոճիքից ներս նայեց, հոտստեց նրա ականջը և հետո սողաց հատակին, այնտեղ ել նստեց և սկսեց իր քիթը տրորել:

— Այս ինչ բան ե, — աղաղակեց Թորիկի մայրը, — այ քեզ վայրի գաղանիկ: Շատ կարելի յե ձեռնասուն դարձավ դրանից, վոր մենք նրա հետ լավ վարվեցինք:

— Բոլոր մանգուստներն այսպես են, — պատասխանեց նրան ամուսինը: — Յեթե Թորիկը չքաշի նրա պոչից, կամ թե վանդակի մեջ չդնի, նա ամբողջ որերով կվազի տնով մեկ: Նրան ուտելու բան տվեք:

Մի կտոր հում միս տվին: Ռիկի-Տիկի-Տավին շատ երս սիրում հում միս, և յերբ ուտելը վերջացրեց, դուրս յեկավ սրահը, նստեց արևակողը և մազեցը գզզեց, վոր դրանք արմատից չորանան: Դրանից ել նա թեթևացավ:

— Միայն թե, — ասավ նա իրեն, — այստեղ չափազանց շատ հետախուզուզելու բաներ կան, վորոնց յես չեյի գտնի մեր բնում ամբողջ կյանքում: Յես այստեղ կմնամ և կպարապեմ ուսումնասիրությամբ:

Ամբողջ որը նա թափառում եր տանը՝ այստեղ, այնտեղ: Նա քիչ եր մնում խեղվեր լողանքի դաշտում, քիթը խոթեց գրասեղանի թանաքամանի մեջ և քթի ծայրն այրեց Մեծ Մարդու սիգարից այն ժամանակ, յերբ բարձրացավ այդ մարդու ծնկներին, վոր տեսնի, թե ինչպես են գրում մարդիկ: Յերեկոյան նա վազեց Թորիկի սենյակը նայելու, թե ինչպես են վառում նավթի լամպան: Իսկ յերբ Թորիկը պառկեց քնելու՝ նա սողաց գեղի անկողինը, նրա մոտ: Բայց այդ գաղանիկը շատ անհանգիստ ընկեր եր: Ամբողջ գիշերը, ամեն ըովե ամեն ձայնի վրա վեր եր

թոչում և վազում եր իմանալու, թե ինչ բան ե: Պառկելուց առաջ՝ Թորիկի հայրն ու մայրը սովորաբար գալիս ելին վերջին անգամ նայելու մանկանը: Նրանք տեսան, վոր Ռիկին նստած ե բարձին:

— Այդ ինձ դուր չի գալիս, — դժգոհելով ասավ Թորիկի մայրը, — կարող ե կծել յերեխին:

— Այդպես բան չի անի նա, — առարկեց հայրը, — Թորիկը այդ գաղանիկի հետ ավելի ապահով ե, քան թե խուզարկու շան հետ: Թեկուղ հիմա ոձ մտներ մանկանոց:

Բայց Թորիկի մայրը լսել անգամ չեր ուզում այդպիսի սարսափների մասին:

Վաղ առավտյան Ռիկին, Թորիկի ուսին հեծած, յեկավ առաջին նախաճաշին, նրան ավին բանան և ձու: Նա հերթով նստում եր բոլոր նախաճաշողների ծնկներին: Ամեն մի կարգին մանգուստն այն հույսն ունի, վոր վաղ թե ու շլինելու յե տանու մանգուստ, և սենյակներում վազվելու իրավունք ե ստանալու: Այդպես ե յեղել Ռիկի-Տիկիկի մայրը: Նա յերկար ժամանակ ապրում եր Սեգովլի գլուղում մի զորապետի տան: Մայրը մանրամասն բացատրել ե նրան, թե ինչպես պիտի պահի իրեն սպիտակ մարդկանց հետ:

Հետո Ռիկի-Տիկիկին գնաց այգին զիտելու: Այգին շատ մեծ եր, կիսով չափ մշակված, վորտեղ կային մեծ քանակությամբ վարդի թփեր, կիտրոնի և նարնջի ծառեր, խիտքուսած բամբուկ և բարձրաբոյ խոտ: Ռիկի-Տիկիկի բերանի ջուրը գնաց:

— Վորսի համար հրաշալի տեղ ե, — ասավ նա, և հենց այդ միտքը ուղցրեց նրա պոչը իսկ և իսկ խոզանակի պես: Նա վազվում եր այգու մեջ բոլոր ուղղություններով,

Ժամանակ առ ժամանակ հոտոտելով ոդը, և հանկարծ լսեց փշոտ թփից ինչվոր սրտաճմլիկ ձայներ։ Այդ Դարզի-Սլավկա-դերձակն եր և նրա կին։

Նրանք հյուսել եյին մի հրաշալի բուն, գնելով իրար վրա յերկու մեծ տերև և կարելով նրանց յեղբները բույսի բարակ թելիկներով, իսկ բնի ներսը փոել եյին բամբակ ու փափուկ փետուր։ Բունը որորվում եր այս ու այն կողմը, իսկ իրանք նստել եյին նրա աջ կողմը և լալիս եյին։

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Ռիկկի-Տիկկի-Տավին։

— Մեծ դժբախտություն, — պատասխանեց Դարզին, — մեր ճուտիկներից մեկը յերեկ ընկավ բնից, և ոճ՝ նայան նրան խժոեց։

— Հըմ, — աղաղակեց Ռիկկի-Տիկկի-Տավին, — շատ և շատ ցավալի յեւ Բայց յեւ այստեղ ոտար եմ, ով ե այդ նայան։

Դարզին կնոջ հետ կուչ եյին յեկել բնի մեջ, վոչինչ չպատասխանելով։ Խիտ խոտի միջից թփի տակից լավեց մի ծանր Փշոց, մի գարշելի, սարսափեցնող ձայն, վորը Ռիկկի-Տիկկիին յերկու փուտ տեղից յետ թոցրեց։ Հետո քիչ-քիչ բարձրացրեց խոտի միջից գլուխը և բացված վեղարվ՝ ահագին սև կոմբըի, վորի յերկարությունը լեզվից սկսած մինչեւ պոչը լրիվ հինգ փուտ եր։ Բարձրացնելով գետնից իր յերկարության մի յերրորդ մասը՝ ոճն սկսեց տատանվել, կողքից կողը ընկնել, ինչպես իսկական կռաքանջարը քամու առաջ, և նայեց Ռիկկի-Տիկկիի վրա իր չար ոճի աչքերով, վոր յերբեք չեն փոխում իրենց արտահայտությունը, ինչի մասին ել մտածելիս լինի ոճը։

— Ո՞վ ե նայան, — հարցրեց նա։



— Յես եմ նայան։ Մեծ բրահման իր նշանը դրել եմեր ցեղի վրա, յերբ առաջին կոմքրան փռեց իր վեղարը քնած բրահմի վրա՝ արկից պաշտպանելու համար։ Նալիր և դողա։

Նա դեռ ելի փռեց իր վեղարը, Ռիկկի-Տիկկին տեսավ ոձի ակնոցները, իսկ և իսկ ողակների նման, վորոնց ամրացնում են շորի չապրաստները։

Առաջին ըոսելին Ռիկկին սարսափեց. բայց մանգուստը չի կարող յերկար վախ զգալ, և թեպետ Ռիկկի-Տիկկին յերբեք չեր պատահել կենդանի կոմքրի, բայց մայրը նրան կերակրել եր սատկածներով, — սակայն նա գիտեր, վոր չափահաս մանգուստները նրա համար են, վոր կովեն ոձերի հետ և ուտեն նրանց։ Նայա ոձը նույնպես գիտեր այդ և իր սառն սրտի խորքում քիչ չեր վախում Ռիկկի-Տիկկից։

— Լավ, — ասաց Ռիկկի-Տիկկին, և նրա պոչն սկսեց ուռչել, — քեզ վրա նշան կա-չկա, այդ իմ բանը չի, բայց այդ քեզ իրավունք չի տալիս, վոր դու ծառից ընկած ճուտիկներին ուտես։

Նայան իր մտքի յետելից եր ընկել և դիտում եր խոտերում Ռիկկի-Տիկկիի ամենափոքր շարժումն անգամ։

Նա գիտեր, վոր բակում մանգուստի յերևալը վատ նշան ե. իր ընտանիքի գլխին մի փորձանք կըերի. բայց մի կերպ ուզում եր քնացնել Ռիկկի-Տիկկիին։ Նա գլուխը կախեց և ծոեց կողքի վրա։

— Խոսենք, — ասավ նա, — դու ուտում ես ձու, ել ինչու ինձ չի կտրելի թռչուն ուտեր։

— Յետ, յետ նայիր, — յերգեց Դարգին։

Ռիկկի-Տիկկին յետ նայելու համար ժամանակ չկորցրեց, նա վեր ցատկեց ինչքան ուժ ուներ, և նույն ըս-



պեյին ել նրա տակը սուլեց Նայայի կատաղի կնոջ գլուխը։
Տիկին Նայան թագնվել եր խոսակցության ժամանակ և
ուղում եր վերջացնի նրան։ և Ռիկին լսեց, թե ինչպես
խանում ոձը կատաղի Փշաց՝ վրիպելով նպատակից։

Ռիկի-Տիկին այն ե փռվում եր ոձի մեջքին, և յեթե
նա լիներ հին մանգուստ, կգիտենար, վոր այդ ամենահար-
մար մոմենտն ե հարձակվելու և նրա վողնաշարը կրծելու։
Բայց նա վախում եր կոմքրի պոչի սաստիկ հարվածից,
նա, ճիշտ ե, կծեց ոձին, բայց մի ակնթարթում յետ թռավ
գալարփող պոչից, թողնելով կատաղած ոձին վիրավոր։

— Չար, չար Դարզի, — աղաղակեց ոձը, ձգվելով դեպի
բունը, ինչքան կարելի յե բարձր։

Բայց Դարզին իր բունը շինել եր շատ բարձր, այն-
պես, վոր ոձը չհասավ բնին։ Միայն կատաղի որորփում
եր մի կողմից մյուս կողմի վրա։ Ռիկի-Տիկին զգաց,
թե ինչպես իր աչքերը կարմրեցին և տաքացան (յերբ
մանգուստի աչքերը կարմրում են — նշանակում ե՝ կատա-
ղել ե) և նստեց պոչի ու յետի թաթերի վրա, ինչպես
իսկ և իսկ փոքրիկ կոկորդիլոս։ Նայելով իր շուրջը՝ նա
կատաղությունից ճաքում եր, բայց ոձերը՝ մարդ ու կին
Նայաները՝ կորան խոտերում։ Յերբ ոձը նպատակից շեղ-
փում ե, փուստ ե գալիս, նա լուսմ ե և վոչնչով ցույց
չի տալիս, թե ինչ ե ձեռնարկելու։ Ռիկի-Տիկի-Տավին
չեր ուղում հալածել նրանց, պատճառը՝ վոր իր ուժերից
վեր եր յերկու ոձի հետ կովելը միանգամից։ Նա վազեց
տան մոտի ճանապարհի վրա և նստեց մտածելու դրու-
թյան մասին։

Այդ լուրջ բան եր։ Յեթե դուք կարդացել եք բնական
պատմությունից հին գրքերը, ուրեմն կգիտենար, վոր յերբ

մանգուստը ոձի հետ կռվելիս վերք ե ստանում, նա վա-
գում ե ու մի ինչ վոր խոտ ե ուտում, վորն ել նրան
բուժում եւ Բայց այդ ճիշտ չի։ Հաղթությունը կախված
ե աչքի արագությունից և վոտքերի արագությունից, ոձի
հարվածից և մանգուստի թռիչքից։ Անկարելի յե հետեւ
ոձի գլախի շարժումին, յերբ նա խփում ե թշնամուն։ Ռիկ-
ի-Տիկին հասկանում եր, վոր ինքը դեռ ջահել ե և նրա
ինքնասիրությունը շոյում եր այն, վոր նա դուրս պրծավ
պոչի հարձակումից։ Այդ բանը նրան հավատ ներշնչեց՝
վոր ուժեղ ե, և յերբ Թորիկը վազեց յեկավ, Ռիկի-Տիկ-
ին քսվեց նրան, ցանկանալով, վոր իրեն փաղաքշեն։ Բայց
նույն բողեյին, հենց վոր Թորիկը կուացավ, մի ինչ վոր
փոքր բան շարժվեց փոշում, և մի բարակ ճայն ասում
եր. «Զգուշացիր, յես մահն եմ»։ Դա կարայտ մոխրագույն
ոձն եր, վոր սիրում ե թաղվել փոշու մեջ։ Նրա խայթն
ել այնքան վտանգավոր ե, վորքան կոմքրինը։ Բայց այդ
ոձն այնքան փոքր ե, վոր նրան վոչ վոք չի նկատում, և
այդ պատճառով ել նա մարդկանց ավելի շատ զնաս ե
քերում։

Ռիկի-Տիկի աչքերը նորից կարմրատակեցին և նա
սկսեց մոտենալ կարայտին յուրահատուկ թռիչքով, վորը
ժառանգել եր իր նախորդներից։ Այդ մի շատ զվարճալի
բայց և հավասարակշռված քայլվածք ե, այնպես վոր գա-
զանիկը մաս գալու ժամանակ թռիչքներ կարող ե կատա-
րել ինչ ուղղությամբ ել ուղենա, իսկ ոձի հետ կովելիս
այդ մի մեծ առավելություն ե։ Ռիկի-Տիկին չգիտեր՝
վոր նա յենթարկվում ե չափազանց մեծ վտանգի, քան
թե Նայայի հետ կովելիս։ Կարայտն այնպես փոքր ե և
այնպես գառնալ գիտե, վոր յեթե Ռիկի-Տիկին չկծի

Նրա մեջքը՝ գլխից մոտիկ, այն ժամանակ ոճը կիսայթե
նրա աչքը կամ շրթունքը: Բայց Ռիկկի-Տիկկին չգիտեր
այդ: Նրա աչքերը լցվեցին արյունով, և նա որորվեց աջ
ու ձախ, վոր մի լավ տեղ գտնի և պաշտպանվի: Կարայտը
առաջ թռափ, Ռիկկին ցատկեց մի կողմ և հարձակվեց ոճի
վրա, բայց չար մոխրիկի գլուխը բարձրացավ գեպի Ռիկ-
կիի ուսը: Ռիկկին իսկույն ցատկեց ոճի մարմնի վրայից,
Ոճի գլուխը հետևում եր նրան կրնկակոխ:

Այդ ժամանակ Թորիկը գոչեց.

— Այստեղ, այստեղ: Տեսէք, մեր մանգուստն սպա-
նում ե ոճին: Ռիկկի-Տիկկին լսեց Թորիկի մոր լացն ու
կոծը: Հայրը վազեց ձեռնափայտով պատերազմի դաշտ,
բայց մինչև գալ հասնելը, Կարայտը սխալ թռիչք գործեց,
Ռիկկի-Տիկկին թռավ ոճի մեջքին, ծածկեց նրա գլուխը
առաջին թաթերով, ինչքան ուժ ուներ՝ կծեց մեջքը և
գլորվեց նրանից դենք: Այս խայթը անդամալուծեց ոճին,
և Ռիկկին արդեն ուղում եր նրան ուտել՝ սակայն պոչից՝
իր ցեղի սովորության պես, յերբ հանկարծ հիշեց, վոր
յեթե մանգուստը շատ ուտի՝ կծանրանա դարը բարձրա-
նալիս: Յեկ վորովհետեւ նա պիտի իր ուժերն ու արագա-
շարժությունը պահպաներ, ուրեմն շատ կուշտ պիտի չու-
տեր: Ռիկկին գնաց լողանալու թփի տակ՝ փոշու մեջ,
այնինչ այդ միջոցին Թորիկի հայրը փայտով թակում եր
սատկած ոճին:

— Ինչու յե այդպես անում, — մտածում եր Ռիկկի-
Տիկկին, — Չե վոր յես նրան վերջացրի:

Թորիկի մայրը բարձրացրեց գազանիկին գետնից, գրկեց
նրան՝ ասելով.

— Սա ազատեց Թորիկին մահից:




Ինքը Թորիկը նայում եր ծնողներին վախից լայն կլորացած աչքերով։ Ռիկի-Տիկիին շատ եր զվարճացնում այդ տեսարանը, վոր նա, ինարկե, չեր հասկանում։ Թորիկի մայրը կարող եր գաղանիկին շոյել, թեկուզ նրա համար, վոր նա պառկել եր փոշու մեջ։ Այդ ամենը Ռիկիին շատ եր զվարճացնում։

Ճաշին և այդ յերեկո՝ ման գալով սեղանի վրա բաժակ-ների արանքներում՝ նա ազատ կարող եր ճաշակել զանազան բաղցը ուտելիքներ, բայց Ռիկիին մտաբերում եր այն ոձ-ամուսիններին, յերկու Նայային։ Թեև Ռիկիին հաճելի յեր, վոր Թորիկի մայրը շոյում ե և փաղաքշում իրեն, և Թորիկն ել թույլ ե տալիս իր ծնկին նստելու, բայց աչքերը ժամանակ առ ժամանակ կարմրատակում ելին, և նա արձակում եր իր յերկարածիգ պատերազմի կոչը։ — Ռիկի-տիկ, տիկի-տիկի։

Թորիկը տարավ նրան իր անկողնու վրա և ստիպեց, վոր քնի իր կզակի տակ։ Ռիկի-Տիկիին անբարեկիրթ չեր վոր կծեր կամ չանկոեր մանկանը, Բայց հենց վոր Թորիկը քնեց, նա ուղերվեց իր գիշերային զբոսանքները կատարելու տան մեջ և մթնովն ընկավ Զուչունդրա-մշկամկան վրա, վոր թափառում եր պատի յերկարությամբ։ Զուչունդրան մի շատ անբախտ գաղանիկ եւ նա և' ծվծկում ե, և վրչում ե ամբողջ գիշերը, պատրաստվելով դուրս գալու սենյակի մեջ տեղը, բայց յերբեք չի վճռում այդ բայլն անել։

— Մի սպանիր ինձ — ասում եր Զուչունդրան լացակումած, — Ռիկի-Տիկի, մի սպանիր ինձ։

— Միթե դու կարծում ես, վոր ոձին հաղթողը քեզ պես վախկոտ մկան ձեռք կտա, — արհամարհանքով ասավ Ռիկի-Տիկին։



1010
42488



— Ոճ սպանողին ոձերը կսպանեն, — ասաց Զուչունդրան: — Իսկ յես կարող եմ հավատացած լինել, վոր նայան մի մութ գիշեր ինձ քո տեղը չի ընդունի:

— Այդպիսի վտանգ յերբեք չի նախատեսնվում, — ասավ Ռիկկի-Տիկկին, — չե՞ վոր նայան գտնվում ե այգում, իսկ դու, յես գիտեմ, յերբեք այնտեղ չես մտնում:

— Իմ ազգական Զույան ինձ ասավ... — սկսեց Զուչունդրան և հանկարծ լռեց:

— Ի՞նչ ասավ քեզ:

— Սուս, Նայան ամեն տեղ ե, Ռիկկի-Տիկկի: Դու ինքդ խոսիր ազգականիս հետ այգում:

— Ասա, շուտով, Զուչունդրա, յեթե վոչ՝ քեզ կկծեմ: Զուչունդրան նստեց, լաց յեղավ և արցունքները գլորվեցին նրա բեխերի վրայով:

— Յես խղճուկ, վողորմելի արարած եմ, — թընգթընդում եր նա, — յես քաջություն չունեմ, վոր սենյակի մեջտեղը վազեմ: Սուս... յես չեմ համարձակվում քեզ բան պատմելու, և միթե դու չես լսում, Ռիկկի-Տիկկի:

Ռիկկի-Տիկկին ականջ դրեց: Տանը, առաջլա պես, ամեն ինչ հանգիստ եր և լուս, բայց նրան այնպես թվաց, վոր մի թույլ չանկոց ե լսում, ինչպես թե ճանձը լուսամուտի ապակու վրայով բզզալեն դնա:

— Դա Նայան ե, կամ տիկին Նայան, — ասավ նա ինքն իրեն, — ներս ե սողում լողանքի սենյակը դռան ճեղքից: Դու ճիշտն ես ասում, Զուչունդրա, յես պիտի խորհրդակցեմ Զույայի հետ:

Ռիկկի-Տիկկին վազեց թորիկի լողանքի սենյակը, բայց այնտեղ գոչոք չկար, այնտեղից նա վազեց թորիկի մոր լողանքի սենյակը: Կոկ սվաղած պատի տակից մի աղյուս

եր հանգած՝ ջուրը սենյակ գալու համար: Յեվ յերբ Ռիկկի-Տիկկին մտավ արխը, վորով ջուր են բաց թողնում, լսեց ոճ ամուսինների ձայնը: Նրանք փսփսում եյին լուսնյակի լույսի տակ:

— Յերբ տանը մարդ չի լինի, — ասում եր տիկին նայան իր ամուսնուն, — դու պիտի տուն մտնես: Գնա կամացուկ և հիշեր, վոր առաջին անգամ պիտի խայթես այն Մեծ Մարդուն, վոր սպանեց Կարայտին: Հետո՝ յեկ այստեղ, և մենք յերկուսով միասին կվորսանք Ռիկկի-Տիկկիին:

— Բայց դու արդյոք հավատացած ես, վոր մենք մի բան վաստակած կլինենք, յեթե սպանենք մարդկանց, — հարցրեց պարոն Նայան:

— Անպայման, շատ բան: Քանի դեռ այս տանը մարդ չեր բնակվում, տեսել եյիր արդյոք դու յերբեկիցե մեր այգում մանգուստ: Յեթե տունը դատարկ լինի, մենք կթագավորենք այս այգում: Հիշեր նույնպես, հենց վոր մեր ձագուկները սեխի մարգում ձվերից դուրս կգան (իսկ այդ կարող ե հենց վաղը լինի), նրանց հարկավոր ե ընդարձակ տեղ և հանգիստ:

— Յես այդ բանը մոռացել եմ, — աղաղակեց Նայան, — յես կգնամ, բայց հետո կարիք չենք ունենա Ռիկկի-Տիկկիին վորսալու: Յես կսպանեմ Մեծ Մարդուն, նրա կնոջը և մանկանը, յեթե հաջողվի, և կամացուկ կհեռանամ: Այն ժամանակ տունը կդատարկի, և Ռիկկի-Տիկկին ել կհեռանա:

Ռիկկի-Տիկկին կատաղությունից դողում եր՝ լսելով այդ խոսակցությունը: Անա Նայայի գլուխը յերևաց դռան ճեղքում և նրան հետևեց հինգ ֆուտանոց սառն մարմինը: Զնայած իր սաստիկ կատաղությանը՝ Ռիկկի-Տիկկին ակամա սարսափեց, տեսնելով ահագին կոքքի մարմնի

չափը։ Նայան գլուխը վեր բարձրացրեց ու լավ դիտեց լողանքի սենյակը մթության մեջ։ Ռիկկի-Տիկկին կարողացավ տեսնել՝ ինչպես են փայլում նրա աչքերը։

— Յեթե յես նրան այստեղ սպանեմ, այդ կիմանատիկին նայան։ Իսկ յեթե կովեմ նրա հետ մի ընդարձակ տեղ, առավելությունը նրա կողմը կլինի։ Ի՞նչ անեմ, — ասում եր ինքն իրեն Ռիկկի-Տիկկի-Տավին։ Նայան կողքից կողք եր դառնում։ Հետո Ռիկկին լսեց, թե ինչպես նա ջուր ե խմում այն ամանից, վորով լողանքի ավագանը ջուր ելին լցնում։


— Լավ, — ասում եր ոձը, — յերբ կարայտին սպանեցին, Մեծ Մարդու ձեռքին փայտ կար։ Կարելի յե, վոր այդ փայտը հիմա յել նրա մոտ լինի։ Բայց յերբ առավոտյան լողանալու գա, փայտը հետը չի լինի։ Յես նրա գալուն այստեղ կսպասեմ։ տիկին նայա, դու լսում ես, յես այստեղ կսպասեմ մինչև լուսաբացը։

Դրսից հարցին պատասխան չհետևեց, և Ռիկկի-Տիկկին հասկացավ, վոր տիկին նայան գնացել եւ նայան փաթաթվեց ամանի շուրջը։ Ռիկկի-Տիկկին առաջվա պես կանգնած եր եր տեղը, անշարժ, ինչպես մահը։ Մի ժամ անց՝ նա կամաց-կամաց սկսեց շարժվել դեպի ամանը։ Նայան քնել եր, իսկ Ռիկկի-Տիկկին, նայելով նրա ահապին մեջքին, աչքերով ընտրեց կազելու տեղը։ «Յեթե յես առաջին թոփչքիս չկծեմ նրա վողնաշարը, — ասում եր Ռիկկին, — նա կկարողանա կովի դուրս դալ իմ դեմ, իսկ յեթե նա կսկսի կովել, ո, Ռիկկի։ Նա աչքերով չափեց վզի հաստությունը և տեսավ, վոր այդ իր ատամների բանը չի, իսկ յեթե կծելու տեղ պոչի շրջանն ընտրեր, այդ նշանակում եր ոձին ի զուր տեղը կատադեցնել։

— Հարկավոր ե գլուխը, — վճռում ե նա վերջապես։ Այս, գլուխը, վեղարից վերև Յեվ յերբ կկալչեմ այնտեղից, այն ժամանակ պետք չեմ ունենա ատամներով սեղմելու։

Յեվ նա թռավ ոձի վրա. ոճն իր գլուխը դրել եր կավե ամանի ուռած փորի տակ, ամանից քիչ հեռու։ Յեվ յերբ Ռիկկիի ատամները սեղմվեցին, նա իր մեջը հենեց ամանի փորին, վորպեսզի գլուխը պահի։ Այդ նրան մի վայրկյանի գերակշռություն տվեց և նա ոգտագործեց այդ գերակշռությունը լիովին։ Հետո նա տարուբերվեց մի կողմից մյուսը, ինչպես մուկը շան բերանում աջ, ձախ, վերև, ներքև։ Բայց Ռիկկիի աչքերը կարմրել ելին, և նա պինդ կպել եր, այնինչ ոճն իր մարմինը մտրակի նման խփում եր հատակին, շպոտելով դես-դեն սենյակի ամանշամանը, շերեփները, սապնի ամանները, ձլորները։ Ռիկկին սեղմել եր իր ծնոտներն ամուր ու ամուր. նա հավատացած եր, վոր ջարդ ու փշուր կլինի, և իր տոհմի պատվի համար գերադասեց, վոր նրան գտնեն՝ ատամները պինդ սեղմած։ Նրա գլուխը պառուտ եր գալիս, ամբողջ մարմինը ցավում եր, և նրան թվաց, վոր ինքը կտորկառը կլինի, յերբ հանկարծ լսվեց մի վորոտաձայն դղրդոց։ Մի տաք քամի կպավ նրան, կարմիր կրակը վառեց նրա մորթը, և նա ուշաթափվեց։ Աղմուկը Մեծ Մարդուն զարթեցրեց քնից. նա իր յերկփողանի հրացանը դատարկեց ոձի կոնակին, հենց վեղարի յետել։

Ռիկկի-Տիկկին շարունակեց մնալ ոձի յետել, աչքերը խփած և հավատացած եր, վոր ինքն արդեն մեռած եւ Գլուխը չեր շարժվում, իսկ Մեծ Մարդը բարձրացրեց Ռիկկիին, ասելով.



— Դարձյալ մանգուստը։ Ալիսա, այս փոքրիկն այս
անգամ ազատեց մեր կյանքը։

Թորիկի մայրը դուրս վազեց դեմքը ձյունի պես սպի-
տակ և աչքերը չուց ոձի դիակին, իսկ Ռիկկի-Տիկկին
իրեն զցեց Թորիկի սենյակը և համարյա ամբողջ գիշերը
կամացուկ տեղից վեր եր թռչում, վոր հավաստիանա՝
ինքը կենդանի յե, թե մեռած ե, իսկապես հարյուր կտոր
չի դարձել, ինչպես այդ իր աչքին եր յերեսում։

Լուսադեմին քնել եր մեռածի պես, բայց շատ գոհ եր
իրենից։

— Հիմա մնում ե, վոր հաշիվս մաքրեմ տիկին Նայայի
հետ, այդ կարժենա հինգ այնպես պարոն Նայա։ Յեվ ով
գիտե, արդյոք ձվերից դուրս չեն յեկել ոձի ճուտերը,
վորոնց մասին մայր-ոճն եր խոսում։ Կրակ բան ե։ Պետք
ե վաղել Դարդու մոտ, — ասում եր նա։

Չսպասելով նախաճաշին՝ Ռիկկին վազեց դեպի փշի
թռւփը, վորտեղ Դարդին լիաբուկ յերգում եր հաղթական
յերգը։ Նայայի մահվան լուրը թռել եր այգին, վորովհետև
այգին ավլողը նրա դիակը զցեց աղբակույտի մեջ։

— Ախ դու, հիմար, մի փունջ բմբուլ, — կոպիտ կեր-
պով ասավ Ռիկկի-Տիկկին, — գտել ե յերգելու ժամանակը։

— Նայան չկա, չկա, յերգում եր Դարդին։ — Հերոս
Ռիկկի-Տիկկին բռնեց նրա գլուխը և պինդ պահեց նրան։
Մեծ Մարդը բերեց իր ահազին դավագանը, և Նայան
յերկու կտոր յեղավ։ Հիմա նա ել յերբեք իմ ճուտիկնե-
րին չի ուտի։

— Այդ բոլորը քո ասածն ե, բայց ուր ե տիկին Նա-
յան, — հարցնում ե Ռիկկի-Տիկկին և կասկածանքով դի-
տում ե շուրջը։

— Տիկին Նայան մոտեցավ լողանքի սենյակի ճեղքին և կանչեց. Նայա, — շարունակեց Դարդին, — և Նայան բարձրացավ փայտի ծայրը: Բակ սրբողը առավ նրան փայտի ծայրին ու շպրտեց աղբի մեջ: Յերգենք մեծ և կարմրաշք Ռիկկի-Տիկկին — ու բուկն ուոց նելով առաջ-վանից ել բարձր յերգեց:

— Յեթե յես կարողանայի հասնել քո բնին, դեն կշպըր-տեյի քո ճուտիկներին, — չարացավ Ռիկկի-Տիկկին: — Ամեն բանն իր ժամանակն ունի: Քեզ համար այդտեղ բնում լավ ե, իսկ այստեղ ինձ համար վոչ թե կյանքի, այլ մահու կոիվ ե: Գոնե մի ըոպե թող յերգելո, Դարդի:

— Մեծ և գեղեցիկ Ռիկկի-Տիկկիի պատվի համար՝ ել չեմ յերգի, — աղաղակեց Դարդին, — թող քո ուզածը լինի, ո դու, հրեշ-ոձին սպանող:

— Յերրորդ անդամն ե հարցնում եմ քեզ. ուր ե տի-կին Նայան:

— Աղբանոցում, գոմի մոտ, վողբում ե իր ամուսնուն, մեծդդ Ռիկկի-Տիկկի, սպիտակատամ:

— Թող կորչեն իմ սպիտակ ատամները. չզիտե՞ս, վոր-տեղ ե պահում ձվերը:

— Սեխի մարգում, պատի մոտ, վորաեղ համարյա ամբողջ որը արև կա: Նա թագցրեց նրանց մի քանի շա-բաթ սրանից առաջ:

— Յեվ դու մինչև հիմա այդ բանն ինձ չես ասել. պատի մոտ, համ, ասում ես դու:

— Ռիկկի-Տիկկի, դու ձու չես ուտում:

— Վնչ, չեմ ուտում, Դարդի:

— Յեթե մի կաթիլ խելք ունենաս, կթոչես գոմի մոտ, թեղ ջարդած կձեանաս և թող տիկին Նայան

յետկիցդ ընկնի դեպի այս թուփը, հասկանում ես: Յես պետք ե գնամ դեպի սեխի մարզը, իսկ յեթե գնամ այն-տեղ, նա իսկույն ինձ կնկատի:

Դարդին բավական հիմարի մեկն եր, մի մտքից ավելի միտք գլխումը չեր մնում: Յեվ վորովհետև Նայայի ճուտերը ծնվում եյին ձվերի մեջ, ինչպես և իր ճուտերը, ուրեմն նրա գլուխը չեր մտնում, թե կարելի յե նրանց սպանել: Բայց նրա տիկինը մի խելացի թոչուն եր և շատ լավ եր իմանում, վոր կորը ձվերը վաղ թե ուշ պիտի դառնան փոքրիկ կորըիկներ: Մայր-թոչունը թուավ բնից, իր տեղը նստեցըց Դարդուն, վոր նա տաքացնի ճուտիկ-ներին, և սկսի եր յերգը յերգել ոճի մահվան մասին: Դարդին մի քանի բաներում շատ եր նմանվում մարդ-կանց:

Մայր-թոչունը թափահարեց թերը հենց ոճի քթի առաջ, աղբակույտի մոտ և ճչաց.

— Ո՞վ, թես ջարդեցին: Յերեխան քար գցեց, կպավ, թես ջարդեց:

Նայան գլուխը բարձրացրեց և ֆշաց.

— Դու զգուշացրի Ռիկկի-Տիկկին, յերբ յես ուզում եյի նրան կծել: Կաղալու համար շատ անհարմար ժամանակ ես գտել:

Յեվ նա հարձակվեց Դարդու կնոջ վրա, գալարվելով փոշու մեջ:

— Յերեխայի մեկը թես ջարդեց, — գանգատվում եր Դարդու կինը:

— Ե, ինչ. քեզ մխիթարելու համար կարող եմ ասել, վոր քո մահից հետո՝ նրա հետ հաշիվ կտեանեմ: Իմ ամուսինն առավոտից ընկած ե աղբակույտում, բայց գիշերը



դեռ չեկած, յերեխան ել տանից կվերանա։ Ել ի՞նչ չարչարվեմ, գիտեմ, վոր քեզ բռնելու յեմ։ Ո՛, հիմար, նայիր աչքերիս։

Բայց թոշունը գիտեր, վոր այդ չի կարելի անել։ Ոձի աչքերին նայող թոշունը սաստիկ վախից քարանում մնում է, չի կարողանում տեղից շարժվել։ Դարզու կինը վոստվոստալով վազում եր գետնի յերեսով և ցավալի ծվծվում, իսկ ոճն արագացնում եր իր վազքը։

Ռիկկի-Տիկկին լսեց, վոր գալիս են նրանք գոմի ճամբով և ամբողջ թափով հարձակվեց դեպի սեխի մարդկ՝ պատի մոտ։ Այստեղ, սեխի մարդի տաք խոտերում շատ վարպետորեն թագցրած եյին հինգ ձու՝ բանտամյան հավի ձվի մեծությամբ, բայց անկճեպ, ծածկված բարակ մաշկով։

— Ելի մի որ՝ և արդեն ուշ կլիներ, — ասում ե Ռիկկի-Տիկկին։ Նա պարզ տեսնում եր ձվերի մեջ կծկված փոքրիկ կոբրիկներին և գիտեր, վոր այն ըոպեյից, հենց վոր դուրս գային կծեպից, կկարողանային մարդ սպանել, կամ մանգուստին։

Շուտ-շուտ նա կծոտում եր ձվերի սուր ծայրերը, աշխատելով խեղդել կոբրիկներին, և ժամանակ առ ժամանակ խառնում եր խոտերը, վորպեսզի համոզվի, արդյոք աչքից բաց չի թողել ձվերից մեկը։ Վերջապես յերեք ձու մնաց։ Ռիկկի-Տիկկին սկսեց ուրախ հոհուալ, մեկ ել հանկարծ լսեց թոշնի, Դարզու կնոջ աղաղակը։

— Ռիկկի-Տիկկի, յես ոճին բերի դեպի տուն, իսկ նա գնաց դեպի սրահ։ Շուտ հասիր, քանի չի խայթել։

— Ռիկկի-Տիկկին ջարդեց յերկու ձուն, գլխակոնծի տալով թոավ սեխի մարդից՝ յերրորդ ձուն բերանում, և



հենց վոր նրա վոտները գետին առան, վազեց դեպի սրահը։
Այստեղ նստած եյին նախաճաշի Թորիկը հոր ու մոր հետ,
բայց Ռիկի-Տիկին տեսնում եր, վոր նրանք դեռ բան չեն
ուտում։ Նրանք նստած եյին քարե արձանի պես, դեմքերը
գունատ։ Ոձը պառկած եր խսիրի վրա կծկված՝ Թորիկի
աթոռից վոչ հեռու։ Թորիկը նստած եր աթոռին՝ վոտները
մերկ։ Ոձը շուռ ու մուռ եր գալիս, յերգելով իր հաղթա-
կան յերգը։

— Մեծ Մարդու վորդի, քո հայրն սպանեց ամուսնուս՝
Նայային, — յերգում եր նա, — նստիր անշարժ։ Յես դեռ
պատրաստ չեմ, մի քիչ սպասիր։ Հանդիսատ նստեցեք յե-
րեքով, յեթե շարժվեք՝ կխայթեմ։ Ո՞, հիմար մարդիկ, իմ
Նայային սպանողներ։

Թորիկի աչքերն ուղղած եյին հոր վրա, իսկ հայրը
կարողանում եր միայն փսփսալ՝

— Հանդիսատ նստիր, Թորիկ, ժաժ չգաս, չշարժվես
տեղից։

Բայց այդտեղ մոտ վագող Ռիկի-Տիկին գոչեց։

— Յետ դարձիր, տիկին Նայա, կովենք։

— Դրա ժամանակն ել կգա։ Հիմա քեզ հետ ել հաշիվ
կտեմնեմ։ Նայիր քո բարեկամներին, Ռիկի-Տիկի, տես
ինչպես անշարժ են և գունատ։ Նրանք վախից քարացել
են, նրանք չեն համարձակվում տեղից ժաժ գալ, և յեթե
դու յել մի քայլ առաջ ես յեկել՝ կխայթեմ։

— Նայիր քո ձվերին, — գոչեց Ռիկի-Տիկին, քո ձվե-
րին պատի մոտ, սեխի մարդում։ Գնա և աչքովդ տես,
տիկին Նայա։

Ահագին ոձը յետ դարձավ և տեսավ ձուն սրահում։

— Ա'խ, դա տուր ինձ, — գոչեց նա։

Ռիկկի-Տիկկին թաթերով գրկեց ձուն և աչքերն արյունով լցվեցին:

— Ի՞նչ կտաս ձվի փոխարեն, ոճ, փոքրիկ կորբիկի փոխարեն, նոր լշանիկ կորբիկի, ձեր ցեղի վերջին, ամենավերջին կորբիկի փոխարեն: Մնացածներին մըջուններն արդեն ուտում են սեխի մարդում:


Նայան բոլորովին յետ դարձավ, ձվերի համար մոռանալով ամեն ինչ, և Ռիկկի-Տիկկին տեսնում եր, թե ինչպես Թորիկի հայրը մեկնեց իր ահազին ձեռքը, բռնեց Թորիկին ուսից և քաշեց նրան թեյի սեղանի վրայով, աղատելով Նայայից:

— Խաբեցի, խաբեցի. Եյ, ոիկկ-տիկկ, տիկկ-տիկկ, — հըռհըռում եր Ռիկկի-Տիկկին: — Յերեխան անվտանգ ե, և գիտե՞ս, յես բռնեցի Նայային վեղարից՝ յերեկ գիշեր՝ լողանքի սենյակում: Այդտեղ Ռիկկի-Տիկկին, անկվելով գլխի վրա, վոտ ներով ովի մեջբուլղի-բուլղի յեր անում: — Նա, — շարունակեց Ռիկկի-Տիկկին, — Նայան ինձ դես-դեն եր գցում, բայց չկարողացավ ինձ իր վրայից պոկեր, դեն շպրտեր, և մարդը նրան դեռ չեր կտրտել — նա արդեն սատկած եր: Այդ որին յես հասցրի: Ե՞յ, տրա-լա-լա, ոիկկ-տիկկ, տիկկի-տիկկի: Մոտ յեկ, մոտեցիր, տիկին Նայա, յեկ կռվենք: Յերկար այրի չես մնա:

Նայան տեսնում ե, վոր կորցրեց Թորիկին խայթելու հարմար առիթը և տեսնում ե իր ձուն Ռիկկի-Տիկկի թաթերում:

— Ձուն ինձ տուր, Ռիկկի-Տիկկի, տուր ինձ վերջին ձուս, և յես կհեռանամ ու յերբեք չեմ վերադառնա այստեղ, — աղաչում եր նա, բանալով իր վեղարը:

— Այս, դու բոլորովին ճիշտ ես ասում, դու ել յեր-



բեք այստեղ չես վերադառնա: Դու յել կգնաս աղբակույտ՝
քո սիրելի ամուսնուդ յետեից: Կովի՛ր, Նայա: Մեծ Մարդը
գնաց հրացանը բերելու, կովիր, կհաղթես:

Ոիկկի-Տիկկին թոշկոտում եր ոձի շուրջը, շգուշու-
թյուն պահպանալով և նրա կարմրատակած աչքերը վառ-
վում եյին ածուխի պես: Ոճն իրեն հավաքեց և հարձակ-
վեց նրա վրա: Ոիկկի-Տիկկին վեր ցատկեց, հետո՝ յետ:
Նորից և նորից ոճը հարձակվեց և ամեն անդամնրա զլուխը
շնկալով կպչում եր սրահի խսրին և ինքը կծկվում եր ժա-
մացույցի զսպանակի պես, իսկ Ոիկկի-Տիկկին պարում եր
նրա շուրջը, աշխատելով թիկունքն անցնել: Ոճը պտտվում
եր և աշխատում, վոր յերես առ յերես լինեն, իսկ պոչը
խսրին քսվելուց մի տեսակ ձայն եր դուրս գալիս, շատ
նման քամուց հալածված չոր տերեների ձայնին:

Ոիկկի-Տիկկին մոռացավ ձուն, վոր դեռ ընկած եր սրա-
հում, իսկ ոճը հա մոտենում եր ձվին: Վերջապես, հար-
մար բոպե գտնելով, հաջողցնելով, յերբ Ոիկկի-Տիկկին իր
շունչն եր հավաքում, նա վրա պրծավ, ձուն յերախն
առավ և դեպի սանդուխքը: Այսոելից ել թուավ նետի պես:
Ոիկկի-Տիկկին ել կընկակոխ նրա յետեից:

Յերբ կորրան ազատում ե իր կյանքը՝ նա սլանում ե,
կեռ ու մեռ գալով, ձիուն խփող մտրակի պես: Ոիկկի-
Տիկկին հասկանում եր, վոր նրան բռնել ե հարկավոր, այլ
կերպով՝ դարձյալ կոկովի աղմուկն ու անհանգստու-
թյունը: Ոճը վազում եր ուղիղ դեպի փշաթփի բարձր
խոտերը. և յերբ վազում եր՝ Դարզին յերգում եր իր հի-
մար, հաղթական յերգը: Բայց Դարզու կինը մարդուց
ավելի խելացի յերբ: Նա ցած թուավ բնից՝ յերբ ոճը մոտե-
ցավ և սկսեց թափահարել թևերը նրա զլսին: Յեթե

Դարզին ոգնության գար իր կնոջը, յերկուսով ոձին ճա-
նապարհը փոխել կտային, բայց ոճը ծալեց վեղարը և
արագացրեց վազքը: Սակայն մի վայրկյան ուշանալը բա-
վական կլիներ, վոր Ոիկկին հասներ ոձին: Յերբ ոճն իրեն
զցեց այն բունը, վորտեղ ապրում ելին ամուսնու հետ,
սպիտակ ատամները կպան նրա պոչին և Ոիկկին պոշի
հետ գնաց, թեև վոչ մի մանգուստ, վորքան ել նա ծեր
և խելացի լիներ, կորբի հետ բուն չեր մտնի: Բունը
մութն եր և Ոիկկին չգիտեր՝ թե այդ բունը վորտեղ
կլայնանա, կընդարձակվի, վոր ոճը դառնա և իր հետ
կովի: Նա պինդ կպել եր պոչից և հենվել եր վոտներին,
վորպեսզի դանդաղեցնի տաք և խոնավ բունը մտնելը...
Հետո բնի մուտքի խոտերը դադարեցին որորվել և Դար-
զին յերգեց.

— Հիմա արդեն Ոիկկի-Տիկկիի վերջն ե: Յերգենք նրա
մահը: Հերոս Ոիկկի-Տիկկին գնաց: Նայան կսպանէ
նրան: — Յեվ նա յերկարացրեց իր թաղման յերգը, վոր
նոր եր բանաստեղծել: Բայց նա դեռ չեր հասել յերգի
ամենասրատառուչ տեղը, յերբ մեկ ել խոտերը շարժվեցին
և Ոիկկի-Տիկկին ցեխուաված՝ կամաց դուրս յեկավ բնից
և սկսեց բեխերը լիզել: Մի թեթև ճիչ արձակելով՝ Դար-
զին լոեց: Ոիկկի-Տիկկին թափ տվեց իր մորթու վորչին
և փոշտաց.

— Ամեն ինչ վերջացած ե, — աղաղակեց նա, — այրին
ել յերբեք լույս աշխարհ դուրս չի գա:

Այդ խոսքերը լսելով, կարմիր մրջյունները, վորոնք
քնած եյին խոտերի մեջ, սկսեցին հավաքվել խմբերով և
գնալ ստուգելու Ոիկկի-Տիկկիի խոսքերի ճշտությունը:

Ոիկկի-Տիկկին կծիկ դարձած քնել եր խոտերում և

քունը տևեց մինչև իրիկուն այդ բազմաչարչար որ-
վա մեջ:

— Ե՛, հիմա, — ասավնա զարթնելուց հետո, — ուղևոր-
վենք տուն: Հաղորդիր Պղնձագործին, Դարզի, և թող նա
այգում հայտարարի, վոր այրի Նայան ել մեռավ, գնաց:

Պղնձագործը թոշուն ե, այնպիսի ձայն ե հանում,
ինչպիսին հանում ե մուրճը պղնձե ամանին խփվելիս:
Այդ անում ե նրա համար, վոր մունետիկի պես Հնդկաս-
տանի այգիներում նորություններ հաղորդի բոլոր թոշուն-
ներին: Ճամբով գնալիս՝ Ռիկկի-Տիկկին լսեց Պղնձագործի
ձայնը, վոր հետզհետե բարձրացավ ու զիլ զընդ-զնդաց.

— Դին-դոն-դին: — Նայան ընկավ, դին... Այրի Նայան
ընկավ, դոն. դին-դոն-դին:


Այս ձանի վրա բոլոր թոշունները յերգեցին, բոլոր
գորաերը կրկուացին, վորովհետե Նայանները՝ մարդ ու կին՝
շատ եյին սիրում թոշունների և գորաերի միս:

Յերբ Ռիկկին տուն վերադարձավ Թորիկը, մայրը (նա
դեռ շատ գունատ եր, վորովհետե ուշաթափավել եր) և
հայրը դիմավորեցին նրան և քիչ եր մնում վոր լաց լի-
նեյին: Այդ իրիկուն ինչ վոր տալիս եյին նրան՝ ուտում
եր, և Թորիկի ուսին նստած՝ գնաց քնելու: Թորիկի մայրը
Ռիկկիին յերեխայի ուսի վրա քնած գտավ, յերբ կես
գիշերին մտավ մանկանոց Թորիկին տեսնելու:

— Նա ազատեց և մեր, և Թորիկի կյանքը, — ասում
եր նա իր ամուսնուն. հասկացիր, հա, նա մեր բոլորիս
կյանքն ազատեց:

Ռիկկի-Տիկկին զարթնեց և տեղից վեր թռավ. ման-
գուստներն զգայուն են, խորը չեն քնում:

— Ախ, այդ դուք եք, — ասավ նա Թորիկի մորը, — ել



559
559
անհանգստանալու բան չկա: Բոլոր կոբրերը վոչնչացան, և
թեկուղ կենդանի ել լինելին, յես այստեղ չեմ:

Ոիկկի-Տիկկին լիակատար իրավունք ուներ հպարտա-
նալու, բայց նա չեր գոռողանում և ազնվաբար ծառա-
յում եր մարդկանց, ինչպես իսկական մանդուստ, թե
ատամով, թե աչքով և թե թոփչքով, և նրա ներկայու-
թյամբ վոչ մի կոբրա չի համարձակվի քիթը ցույց տալ
այգու պատերից:



ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՆԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Հ. Թումանյան — ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ
2. Բ. Ֆիսկով — ՓՂԵՐԻ ՄԱՍԻՆ
3. Մ. Արմեն — ՀՐԱՇԱԼԻ ՍԵՐՄԵՐ
4. Մ. Իլին — ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՎՏՈՄՈՔԻԸ ՄԱՆ ԳԱԼՍՈՎՈՐՅԱՑ
5. Լ. Տոլսույ — ԿՈՎՀ
6. Շեր — ԱՅՆԱ
7. Թումանյան — ԳԱԲՈ ԲԻԶՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ
8. Չուկովսկի — ՏՀՀԱՆ ՃԱՆՃՐ
9. Աբրամովս — ՊՏՏԱՆ
10. Խ. Դաշտեց — ԱՆՈՒՇ ԶԻՆ ՅԵՎ ԻՐ ՔՈՒՌԱԿԱ
11. Գեֆոն — ՌՈԲԻՆԶՈՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱԿ Ե ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ՀՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Չարուչին — ՏԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ
2. Չուկովսկի — ՀԵՌՈՒԽՈՍ
3. Պատակով — ԿԱՑՆԱՎՈՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ
4. Հովհաննիս Պողոսյան — ՈԱԿԵՏՈՎ ԴԵՊԻ ԼՈՒՄԻՆ
5. Մ. Գեվորգյան — ԹՌՉՈՂ ՄՈՒԿԸ
6. Խնկո Ավեր — ՏՐԱՄՎԱՅՐ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
7. Օլեխանելբրուկայս — ՄԱՆԿԱՄՍՈՒԻԹ
8. Բարսու — ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿՆԵՐԸ
9. Եմանուիլ — ԲՈԲԿԱՅԻ ՈՐԸ
10. Մկրտիչ Արմեն — ՈՒՐԱԽ ՈՐ
11. Մկրտիչ Արմեն — ՅԵՐՐՈՐԴ ՄԻԼԻՑԻՈՆԵՐԸ

ՀՀ Ազգային գրադարան



NL0376237

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

718

Р. КИПЛИНГ
РИККИ-ТИККИ-ТАВИ



ԱՐՄԵՆԻԱ-ԷՐԻՎԱՆԻ